

ԿԵԱՆՔԻ ԽՕՍԸԸ

1

Կեանքի Խօսքին մասին – որ սկիզբէն էր, որ մենք լսեցինք, որ մեր աչքերով տեսանք, որ դիտեցինք ու մեր ձեռքերը շօշափեցին. 2 (արդարեւ կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք ու կը պատմենք ձեզի այդ յաւիտեանական կեանքին մասին, որ Շօրը քով էր եւ յայտնուեցաւ մեզի.) – 3 ինչ որ տեսանք ու լսեցինք՝ կը պատմենք ձեզի, որպէսզի դո՛ւք ալ հաղորդութիւն ունենաք մեզի հետ: Մեր հաղորդութիւնը Շօրը հետ է, եւ իր Որդիին՝ Յիսուս Զրիստոսի հետ: 4 Կը գրենք ձեզի այս բաները, որպէսզի ձեր ուրախութիւնը լման ըլլայ:

ԱՍՏՈՒԱԾ ԼՈՅՍ Է

5 Եւ սա՛ է այն պատգամը՝ որ լսեցինք իրմէ ու կը հաղորդենք ձեզի, թէ Աստուած լոյս է, եւ անոր մէջ բնաւ խաւար չկայ: 6 Եթէ ըսենք. «Մենք հաղորդութիւն ունինք անոր հետ», սակայն խաւարի մէջ ընթանանք, կը ստենք ու չենք կիրարկեր ճշմարտութիւնը: 7 Իսկ եթէ լոյսի մէջ ընթանանք, ինչպէս ան լոյսի մէջ է, հաղորդութիւն կ'ունենանք իրարու հետ, եւ անոր Որդիին՝ Յիսուս Զրիստոսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մեղքէ: 8 Եթէ ըսենք. «Մենք մեղք մը չունինք», կը խաբենք մենք մեզ, ու ճշմարտութիւն չկայ մեր մէջ: 9 Իսկ եթէ խոստովանինք մեր մեղքերը, ան հաւատարիմ եւ արդար է՝ ներելու մեր մեղքերը, ու մաքրելու մեզ ամէն անիրաւութենէ: 10 Եթէ ըսենք. «Մենք մեղանչած չենք», ստախօս՝ կը նկատենք՝ զայն, եւ անոր խօսքը մեր մէջ չէ:

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՕԳՆԱԿԱՆՆ Է

2

Որդեակներս, կը գրեմ ձեզի այս բաները՝ որպէսզի չմեղանչէք. իսկ եթէ մէկը մեղանչէ, Շօրը քով ունինք Բարեխօս մը՝ Յիսուս Զրիստոս արդարը: 2 Ա՛ն է մեր մեղքերուն քաւութիւնը. եւ ո՛չ միայն մեր, այլ նաեւ ամբողջ աշխարհի մեղքերուն:

3 Եթէ պահենք անոր պատուիրանները, ասո՛վ կը գիտնանք թէ կը ճանչնանք զայն: 4 Ո՛վ որ կ'ըսէ. «Ես կը ճանչնամ զայն», բայց չի պահեր անոր պատուիրանները, ստախօս է, եւ իր մէջ ճշմարտութիւն չկայ: 5 Բայց ո՛վ որ կը պահէ անոր խօսքը, Աստուծոյ սէրը իրապէս կատարեալ է իր մէջ. ասո՛վ կը գիտնանք թէ անոր մէջ ենք: 6 Ո՛վ որ կ'ըսէ թէ կը բնակի անոր մէջ, պարտաւոր է ընթանալ այնպէս՝ ինչպէս ան ընթացաւ:

ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

7 Եղբայրներ, կը գրեմ ձեզի ո՛չ թէ նոր պատուիրան մը, հապա հին պատուիրան մը՝ որ սկիզբէն ունէիք: Հին պատուիրանը այն խօսքն է՝ որ դուք սկիզբէն լսեցիք: 8 Դարձեալ՝ կը գրեմ ձեզի նոր պատուիրան մը, որ ճշմարիտ է անոր մէջ եւ ձեր մէջ. որովհետեւ խաւարը կ'անցնի ու ճշմարիտ լոյսը արդէն կը փայլի: 9 Ա՛ն որ կ'ըսէ թէ լոյսի մէջ է եւ

^ա Յուն.՝ մոլորեցնենք

^բ Յուն.՝ կ'ընենք

^ա Ոմանք՝ Սիրելիներ

կ'ատէ իր եղբայրը, տակաւին խաւարի մէջ է: **10** Ա'ն որ կը սիրէ իր եղբայրը, կը բնակի լոյսի մէջ, ու գայթակղութիւն չկայ իր մէջ: **11** Բայց ա'ն որ կ'ատէ իր եղբայրը՝ խաւարի մէջ է, խաւարի մէջ կը քալէ եւ չի գիտեր թէ ո'ւր կ'երթայ, որովհետեւ խաւարը կտրցուցած է իր աչքերը:

12 Կը գրեմ ձեզի, որդեակներ, որովհետեւ ձեր մեղքերը ներուած են ձեզի՝ անոր անունին համար: **13** Կը գրեմ ձեզի, հայրեր, որովհետեւ դուք ճանչցաք ա'ն՝ որ սկիզբէն է: Կը գրեմ ձեզի, երիտասարդներ, որովհետեւ դուք յաղթեցիք Չարին: **14** Գրեցի ձեզի, զաւակներ, որովհետեւ դուք ճանչցաք Հայրը: Գրեցի ձեզի, հայրեր, որովհետեւ դուք ճանչցաք ա'ն՝ որ սկիզբէն է: Գրեցի ձեզի, երիտասարդներ, որովհետեւ դուք ուժեղ էք, եւ Աստուծոյ խօսքը կը բնակի ձեր մէջ, ու յաղթեցիք Չարին: **15** Մի՛ սիրէք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: **16** Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, Հօրը սէրը չկայ իր մէջ. որովհետեւ ամէն ինչ որ աշխարհի մէջ է՝ մարմինի ցանկութիւնը, աչքերու ցանկութիւնը եւ **այս** կեանքին Բամբարտաւանութիւնը՝ Հօրմէն չէ, հապա **այս** աշխարհէն է: **17** Աշխարհն ալ կ'անցնի, անոր ցանկութիւնն ալ. բայց ա'ն որ կը գործադրէ Աստուծոյ կամքը՝ կը մնայ յաւիտեան:

ՔՐԻՍՏՈՍԻ ԹՇՆԱՄԻՆ

18 Զաւակներ, վերջին ժամն է. եւ ինչպէս լսեցիք թէ՞ Նեռը պիտի գայ, արդէ՛ն շատ նեռեր կան. ատկէ կը գիտնանք թէ վերջին ժամն է: **19** Անոնք մեր մէջէն ելան, բայց մեզմէ չէին. որովհետեւ եթէ ըլլային մեզմէ, կը մնային մեզի հետ: Բայց **մեզմէ ելան**, որպէսզի բացայայտուի թէ անոնք բոլորն **ալ** մեզմէ չէին: **20** Սակայն դուք օծութիւն ունիք Սուրբէն, ու գիտէք ամէն բան: **21** Չգրեցի ձեզի՝ որպէս թէ չէք գիտեր ճշմարտութիւնը, հապա՝ որովհետեւ գիտէ՞ք զայն, եւ քանի որ սուտը ճշմարտութենէն չէ: **22** Ո՞վ է ստախօսը, եթէ ոչ ա'ն՝ որ կ'ուրանայ թէ Յիսուս՝ Քրիստոսն է. նեռ ա'ն է՝ որ կ'ուրանայ Հայրն ու Որդին: **23** Ո՞վ որ կ'ուրանայ Որդին, անիկա Հա՛յրն ալ չունի. (բայց ա'ն որ կը դաւանի Որդին, անիկա Հա՛յրն ալ ունի): **24** Ուրեմն ի՛նչ որ լսեցիք սկիզբէն՝ թող բնակի ձեր մէջ. եթէ ձեր մէջ բնակի ի՛նչ որ սկիզբէն լսեցիք, դո՛ւք ալ պիտի բնակիք Որդիին մէջ ու Հօրը մէջ: **25** Եւ սա՛ է այն խոստումը՝ որ ինք տուաւ ձեզի, այսինքն՝ յաւիտեանական կեանքը: **26** Գրեցի ձեզի այս **բաները**՝ ձեզ մոլորեցնողներուն համար: **27** Այն օծութիւնը որ ստացաք իրմէ՝ կը բնակի ձեր մէջ. **ուստի** պէտք չկայ որ մէկը սորվեցնէ ձեզի: Իսկ քանի որ **այդ** նոյն օծութիւնը կը սորվեցնէ ձեզի ամէն բան, ու ճշմարիտ է եւ ո՛չ թէ սուտ, ի՞ր մէջ բնակեցէ՞ք՝ ի՛նչպէս ան սորվեցուց ձեզի:

28 Ուրեմն հիմա, որդեակներ, բնակեցէ՛ք իր մէջ, որպէսզի երբ ինք երեւնայ՝ համարձակութիւն ունենանք, ու չամչնանք իրմէ իր գալուստին ատենը: **29** Եթէ գիտէք թէ ինք արդար է, կ'ըմբռնէք թէ ո՞վ որ արդարութիւն կը գործէ՝ իրմէ ծնած է:

ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆԵՐԸ

3

Տեսէ՞ք թէ Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ զաւակներ կոչուինք. ուստի աշխարհը չի ճանչնար մեզ, որովհետեւ չճանչցաւ զինք: **2** Սիրելիներ, հիմա մենք Աստուծոյ զաւակներն ենք, եւ տակաւին բացայայտ չէ թէ ի՛նչ պիտի ըլլանք.

^բ **Յուն.**՝ պոռոտախօսութիւնը

^գ **Յուն.**՝ Հակաքրիստոսը

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ Ա. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

բայց գիտենք թե երբ ինք երեւնայ՝ իրեն պէս պիտի ըլլանք, որովհետեւ պիտի տեսնենք զինք՝ ինչպէս որ է:

3 Ո՛վ որ այս յոյսը ունի անոր վրայ, կը մաքրագործէ ինքզինք՝ ինչպէս ան մաքուր է: **4** Ո՛վ որ մեղք կը գործէ՝ կը գործէ նաեւ անօրէնութիւն, եւ **բո՛ւն** մեղքը՝ անօրէնութիւնն է: **5** Եւ գիտէք թե ան յայտնուեցաւ՝ որպէսզի քաւէ մեր մեղքերը. բայց անոր մէջ մեղք չկայ: **6** Ո՛վ որ կը բնակի անոր մէջ՝ չի մեղանչեր. ո՛վ որ մեղանչէ, տեսած չէ զայն ու ճանչցած չէ զայն: **7** Որդեակներ, ո՛չ մէկը թող մոլորեցնէ ձեզ. ո՛վ որ արդարութիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս ան արդար է: **8** Ո՛վ որ մեղք կը գործէ՝ Չարախօսէն է, որովհետեւ Չարախօսը կը մեղանչէ սկիզբէն ի վեր. Աստուծոյ Որդին յայտնուեցաւ՝ որպէսզի քանդէ Չարախօսին գործերը: **9** Ո՛վ որ Աստուծմէ ծնած է՝ մեղք չի գործեր, որովհետեւ անոր սերմը կը մնայ իր մէջ. ու չի կրնար մեղանչել, քանի որ Աստուծմէ ծնած է: **10** Ասո՛վ բացայայտ կ'ըլլան Աստուծոյ զաւակներն ու Չարախօսին զաւակները: Ո՛վ որ արդարութիւն չի գործեր՝ Աստուծմէ չէ, ո՛չ ալ ա՛ն՝ որ չի սիրեր իր եղբայրը:

ՍԻՐԵԼ ԶԻՐԱՐ

11 Արդարեւ սա՛ է այն պատգամը՝ որ դուք լսեցիք սկիզբէն, որ սիրենք զիրար: **12** Չըլլա՛նք Կայէնի պէս, որ Չարէն էր ու մորթեց իր եղբայրը: Եւ ինչո՞ւ մորթեց զայն. քանի որ իր գործերը չար էին, իսկ իր եղբօր **գործերը՝** արդար: **13** Մի՛ զարմանաք, եղբայրներս, եթէ աշխարհը ատէ ձեզ: **14** Մենք գիտենք թէ անցանք մահէն կեանքի, որովհետեւ կը սիրենք եղբայրները. ա՛ն որ չի սիրեր եղբայրը՝ կը բնակի մահուան մէջ: **15** Ո՛վ որ կ'ատէ իր եղբայրը՝ մարդասպան է, եւ գիտէք թէ ո՛չ մէկ մարդասպանի մէջ կը բնակի յաւիտենական կեանքը: **16** Մենք գիտցանք **Քրիստոսի** սէրը, քանի որ ան ընծայեց իր անձը մեզի համար. մե՛նք ալ պարտաւոր ենք ընծայել մեր անձը **մեր** եղբայրներուն համար: **17** Բայց **եթէ** մէկը՝ որ ունի այս աշխարհի ապրուստը, տեսնելով իր կարօտեալ եղբայրը՝ իր գութը գոցէ անկէ, ի՞նչպէս անոր մէջ Աստուծոյ սէրը բնակած կ'ըլլայ: **18** Որդեակներս, սիրենք ո՛չ թէ խօսքով ու լեզուով, հապա՛ գործով եւ ճշմարտութեամբ:

ՀԱՄԱՐՉԱԿՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌՋԵԻ

19 Ասո՛վ կը գիտնանք թէ ճշմարտութենէն ենք, ու մեր սիրտերը կը վստահին անոր առջեւ **երեւնալու**. **20** որովհետեւ եթէ մեր սիրտը պարսաւէ մեզ, Աստուած անլի մեծ է քան մեր սիրտը եւ գիտէ ամէն բան: **21** Սիրելիներ, եթէ մեր սիրտը չպարսաւէ մեզ, այն ատեն համարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ առջեւ, **22** եւ ի՛նչ որ խնդրենք՝ կը ստանանք անկէ, որովհետեւ կը պահենք անոր պատուիրանները, ու կ'ընենք անոր առջեւ հաճելի եղած բաները: **23** Սա՛ է անոր պատուիրանը, որ հաւատանք իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի անունին, ու սիրենք զիրար՝ ինչպէս պատուիրեց մեզի: **24** Ո՛վ որ կը պահէ անոր պատուիրանները՝ կը բնակի անոր մէջ, ան ալ՝ իր մէջ. եւ ասո՛վ գիտենք թէ ան կը բնակի մեր մէջ, **այսինքն** այն Հոգիով՝ որ տուաւ մեզի:

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ ԵՒ ՄՈԼՈՐՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

4

Սիրելիներ, մի՛ հաւատաք ամէն հոգիի, հապա քննեցէ՛ք հոգիները՝ թէ արդեօք Աստուծմէ՛ են. որովհետեւ շատ սուտ մարգարէներ երեւան ելած են աշխարհի մէջ: **2** Սա՛պէս կը ճանչնաք Աստուծոյ Հոգին... ամէն հոգի որ կը դաւանի թէ Յիսուս Քրիստոս մարմնով եկաւ, Աստուծմէ է. **3** իսկ ամէն հոգի որ չի դաւանիր թէ Յիսուս Քրիստոս

մարմինով եկաւ, Աստուծմէ չէ. եւ ա՛յս է՝ Մեռի հոգին, որուն մասին լսեցիք թէ պիտի գայ, ու արդէն աշխարհի մէջ է: **4** Դուք Աստուծմէ էք, որդեակներ, եւ յաղթեցիք անոնց. որովհետեւ ա՛ն որ ձեր մէջ է՝ անելի մեծ է, քան ա՛ն՝ որ աշխարհի մէջ է: **5** Անոնք աշխարհէն են. ուստի կը խօսին աշխարհի մասին, եւ աշխարհը մտիկ կ'ընէ անոնց: **6** Իսկ մենք Աստուծմէ ենք. ա՛ն որ կը ճանչնայ Աստուած՝ մտիկ կ'ընէ մեզի, ա՛ն որ Աստուծմէ չէ՝ մտիկ չ'ըներ մեզի: Ասո՛վ կը գիտնանք ճշմարտութեան Հոգին ու մոլորութեան հոգին:

ԱՍՏՈՒԾ ՍԷՐ Է

7 Սիրելիներ, սիրե՛նք զիրար, քանի որ սէրը Աստուծմէ է: Ո՛վ որ կը սիրէ՝ ծնած է Աստուծմէ ու կը ճանչնայ Աստուած: **8** Ա՛ն որ չի սիրեր՝ չի ճանչնար Աստուած, որովհետեւ Աստուած սէր է: **9** Աստուծոյ սէրը սա՛պէս բացայայտուեցաւ մեզի հանդէպ. Աստուած աշխարհ դրկեց իր միածին Որդին, որպէսզի ապրինք անոր միջոցով: **10** Սէրը ասո՛ր մէջ է. ո՛չ թէ մենք սիրեցինք Աստուած, հապա ա՛ն սիրեց մեզ եւ դրկեց իր Որդին՝ **իբր** քաւութիւն մեր մեղքերուն: **11** Սիրելիներ, եթէ Աստուած ա՛յսպէս սիրեց մեզ, մենք ալ պարտաւոր ենք սիրել զիրար: **12** Ո՛չ մէկը երբեք տեսած է Աստուած: Եթէ սիրենք զիրար, Աստուած կը բնակի մեր մէջ ու անոր սէրը կատարեալ է: **13** Ան իր Հոգիէն տուաւ մեզի. ասո՛վ գիտենք թէ մենք կը բնակինք անոր մէջ, ան ալ՝ մեր մէջ: **14** Ու մենք տեսանք եւ կը վկայենք թէ Հայրը դրկեց **իր** Որդին **իբր** աշխարհի Փրկիչ: **15** Ո՛վ որ կը դաւանի թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, Աստուած կը բնակի անոր մէջ, ան ալ՝ Աստուծոյ մէջ: **16** Մենք գիտցանք Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած սէրը, ու հաւատացինք: Աստուած սէր է. ա՛ն որ կը բնակի սիրոյ մէջ՝ կը բնակի Աստուծոյ մէջ, եւ Աստուած՝ անոր մէջ: **17** Ինչպէս ի՛նք է, նոյնպէս մե՛նք ենք այս աշխարհի մէջ. ասո՛վ մեր սէրը կատարեալ է, որպէսզի համարձակութիւն ունենանք դատաստանին օրը: **18** Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կատարեալ սէրը կը վտարէ վախը. որովհետեւ վախը կ'ենթադրէ պատուհաս: **Ուստի** ո՛վ որ կը վախնայ՝ կատարեալ չէ սիրոյ մէջ: **19** Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ա՛ն սիրեց մեզ: **20** Եթէ մէկը ըսէ. «Ես կը սիրեմ Աստուած», եւ ատէ իր եղբայրը, ստախօս է. որովհետեւ ա՛ն որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ի՞նչպէս կրնայ սիրել Աստուած՝ որ չի տեսներ: **21** Եւ սա՛ պատուիրանը ունինք անկէ. «Ո՛վ որ կը սիրէ Աստուած, թող սիրէ նաեւ իր եղբայրը»:

ՄԵՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԱԾԽԱՐԶԻ ՎՐԱՅ

5

Ո՛վ որ կը հաւատայ թէ Յիսուս՝ Զրիստո՛սն է, ծնած է Աստուծմէ. եւ ո՛վ որ կը սիրէ ծնողը՝ կը սիրէ նաեւ անկէ ծնածը: **2** Երբ սիրենք Աստուած ու պահենք անոր պատուիրանները, ատով կը գիտնանք թէ կը սիրենք Աստուծոյ զաւակները: **3** Զանի որ սա՛ է Աստուծոյ սէրը. – պահել անոր պատուիրանները: Իսկ անոր պատուիրանները ծանր չեն, **4** որովհետեւ ո՛վ որ Աստուծմէ ծնած է՝ կը յաղթէ աշխարհին. «մեր հաւատքն է որ կը յաղթէ աշխարհին»: **5** Ո՛վ կը յաղթէ աշխարհին, եթէ ոչ ա՛ն՝ որ կը հաւատայ թէ Յիսուս Աստուծոյ Որդին է:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

^ա **Յուճ.**՝ Հակաքրիստոսի

^ա **Յուճ.**՝ անհաւաստիկ յաղթանակը որ կը յաղթէ աշխարհին – մեր հաւատքը

6 Ի՛նքն է՝ Յիսուս Զրիստոս՝ որ եկաւ ջուրով ու արիւնով. ո՛չ միայն ջուրով, հապա՛ ջուրով եւ արիւնով. ու Հոգի՛ն է որ կը վկայէ, որովհետեւ Հոգին ճշմարտութիւն է: 7 Արդարեւ երե՛ք են՝ որ կը վկայեն Բերկինքի մէջ.– Հայրը, Խօսքը եւ Սուրբ Հոգին, ու այս երեքը մէկ են: 8 Նաեւ երե՛ք են՝ որ կը վկայեն երկրի վրայ՝.– Հոգին, ջուրը եւ արիւնը, ու այս երեքը միաձայն են: 9 Եթէ կ'ընդունինք մարդոց վկայութիւնը, Աստուծոյ վկայութիւնը աւելի մեծ է. որովհետեւ ա՛յս է Աստուծոյ վկայութիւնը՝ որ տուաւ իր Որդիին մասին: 10 Ա՛ն որ կը հաւատայ Աստուծոյ Որդիին՝ իր մէջ ունի այս վկայութիւնը: Ա՛ն որ չի հաւատար Աստուծոյ՝ ստախօս «կը նկատէ» գայն, որովհետեւ չի հաւատար այն վկայութեան՝ որ Աստուած տուաւ իր Որդիին մասին: 11 Իսկ սա՛ է վկայութիւնը.– Աստուած տուաւ մեզի յաւիտենական կեանքը, եւ այս կեանքը անոր Որդիին մէջ է: 12 Ա՛ն որ ունի Որդին՝ ունի կեանքը. ա՛ն որ չունի Աստուծոյ Որդին՝ չունի կեանքը:

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

13 Գրեցի այս բաները ձեզի՛ որ կը հաւատաք Աստուծոյ Որդիին անունին, որպէսզի գիտնաք թէ ունիք յաւիտենական կեանքը՝: 14 Այն համարձակութիւնը որ ունինք անոր քով՝ սա՛ է.– Եթէ որեւէ բան խնդրենք իր կամքին համաձայն, կը լսէ մեզ: 15 Ու եթէ գիտենք թէ կը լսէ մեզ՝ ի՛նչ որ ալ խնդրենք, գիտենք նաեւ թէ կ'ունենանք այն Բաները՝ որ կը խնդրենք իրմէ:

16 Եթէ մէկը տեսնէ թէ իր եղբայրը կը գործէ մեղք մը՝ որ մահացու չէ, թող խնդրէ, եւ Աստուած կեանք պիտի տայ անոր, այսինքն անոնց՝ որ մահացու մեղք չեն գործեր: Մեղք կայ՝ որ մահացու է. չեմ ըսեր որ թախանձէ անոր համար: 17 Ամէն անիրաւութիւն մեղք է, բայց մեղք կայ՝ որ մահացու չէ:

18 Գիտենք թէ ո՛վ որ Աստուծմէ ծնած է՝ չի մեղանջեր: Ո՛վ որ Աստուծմէ ծնած է՝ կը պահէ ինքզինք, ու Չարը չի դպչիր իրեն: 19 Գիտենք թէ մենք Աստուծմէ ենք, իսկ ամբողջ աշխարհը Չարին մէջ «մխրճուած է»: 20 Նաեւ գիտենք թէ Աստուծոյ Որդին եկաւ, եւ Էուշիմութիւն տուաւ մեզի՛ որպէսզի ճանչնանք Ճշմարիտը: Ու մենք այդ Ճշմարիտին մէջ ենք, անոր Որդիին՝ Յիսուս Զրիստոսի մէջ. ի՛նքն է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը: 21 Որդեակներ, զգուշացէ՛ք կուռքերէն:»

^բ Ծատ հին ձեռագիրներ չունին

^գ Յուն.՝ կ'ընէ

^դ Ոմանք կ'աւելցնեն՝ եւ որպէսզի հաւատաք Աստուծոյ Որդիին անունին

^ե Յուն.՝ խնդրանքները

^զ Յուն.՝ դրուած

^է Յուն.՝ միտք

^ը Ոմանք կ'աւելցնեն՝ Ամէն: